ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **17/05/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Մարինե Գրիգորյանը, Գևորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Հայկ Հակոբյանը, Անի Հարությունյանը, Ջիվան Մարգարյանը, Արմենակ Միրզախանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գարիկ Հակոբյանը, Աննա Կարապետյանը, Երվանդ Եղիազարյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Արմեն Խաչատրյանը, Վեյնամին Թանգյանը, Նարեկ Հովսեփյանը, Սուսաննա Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգը հաստատելը համայնքի ղեկավարը շնորհավորեց ավագանու անդամ Հովսեփ Առաքելյանին ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի պետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2024 թվականի մայիսի 17-ի հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
2) «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու և Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 022-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 020-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 055-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2671586.1 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2683256.4 հազար դրամ» բառերով.
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3550878.6 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3562548.9 հազար դրամ» բառերով.
   3) որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի.
   4) որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի.

5) որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասը ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները: Զեկուցեց, որ գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Խաչատրյանի զեկուցագրի հիման վրա առաջարկվում է 980000 ՀՀ դրամ հատկացնել Սպիտակ ամուր /белый амур/ ձկնատեսակ ձեռքբերելու համար, որպեսզի Որոտան գետը մաքրվի ջրիմուռներից: Երկու տարի հետո արդյունքը կերևա: Անհրաժեշտ է 500000 ՀՀ դրամ հատկացնել «Վերջին զանգ»-ի միջոցառումների կազմակերպման համար:
Ավելացրեց նաև որոշման նախագծի ընդունումից հետո բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանա 11670334 ՀՀ դրամով:
Հ. Դանիելյանը հարցրեց, թե որ խումբն է երգելու Վերջին զանգի միջոցառմանը:
Համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը պատասխանեց, որ խումբ չէ, այլ հրավիրել են դիջեյ, իր ծառայությունները մատուցի, այս անգամ որոշել են նորություն անել:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 056-Ն/

Լսեցին
«ՍԱՌՆԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 022-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստաանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, 65-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մադի դ և զ կետերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համար՝ 88.210.01076) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համար՝ 88.210.00891):
2. Սահմանել, որ «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը և «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավունքներն ու պարտականություններն անցնում են «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:

3. Հաստատել «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների (ներառյալ՝ վիճարկվող պարտավորությունները) «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:
4. Հաստատել «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից կնքված միացման պայմանագիրը, միացման կարգն ու պայմանները՝ համաձայն միացման պայմանագրի:
5. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
6. Ուժը կորցրած ճանաչել Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 15-ի թիվ 037-Ա որոշումը հաստատելու, «Սիսիանի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և կանոնադրության փոփոխությունները հաստատելու մասին» թիվ 022-Ա որոշումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Ս. Սահակյանը ներկայացրեց, որ նախկին որոշումը ուժը կորցրած են ճանաչում, քանի որ «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի գույքը արժեքներ չուներ, հետևաբար որոշումը իրավաչափ չէ: Հրավիրել են գնահատող ընկերություն, որը իրականացրել է ամբողջ գույքի գնահատում: Ներկայումս փոխանցման ակտում ներառված է ամբողջ գույքը իր արժեքներով, որը պետք է հաստատվի, քանի որ ռեգիստրը առանց արժեքների չի գրանցել:

Ա. Աղաջանյանը հարցրեց, թե միացման պարագայում ծախսային մասում ի՞նչն է նվազելու և աշխատակազմը քանի հոգի է լինելու, աշխատավարձը նվազելո՞ւ է:

Ս. Սահակյանը պատասխանեց, որ ծախսային մասը ավելի արդյունավետ է լինելու և համապատասխանեցվելու է հաստիքները և դրույքաչափերը: Ավելացրեց նաև, որ սաները նույն տարիքի չեն, տարատարիք երեխաներ են, դրա համար մեկ խումբ ունենալը ավելի ճիշտ է: Աշխատակազմը չի փոխվելու, հաստիքներ չեն կրճատվելու, ուղղակի հաստիքների մեջ համապատասխանեցում է լինելու ՀՀ կառավարության կողմից հաստատված վերջին չափորոշիչներին, իսկ աշխատավարձերը համապատասխանելու են «Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակի պաշտոնային դրույքաչափերին:

Երկար քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-10 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 057-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ԲԵՍՏ ԲԱԶԱԼՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ «ԲԵՍՏ ԲԱԶԱԼՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դիմել է մեզ, որ ցանկանում է բազալտի հանք բացել: Շաքի բնակավայրում իրականացվել է հանրային լսումներ: Նոր օրենքով հանրային լսումից հետո համայնքի ավագանին պետք է իր համաձայնությունը տա:

Ս. Վարդանյանը ներկայացրեց, որ այդ հանքերի մշակումից հետո, եթե թունավոր ջուրը գյուղամիջով հոսի՝ գյուղացիների համար շատ վտանգավոր կլինի բնապահպանական տեսակետից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 058-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՆԱՐԵԿ ՍԷԱ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ հանքը աշխատող է, ժամկետը լրացել է, նորից թույլտվություն է ուզում սատանալ հանքի աշխատանքը շարունակելու համար:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 059-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 020-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 315-ից 329 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 060-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 14-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 061-Ա/

Օրակարգից դուրս քննարկեցին նաև բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և շենքերի բակային հատվածների վիճակը և տարվող աշխատանքները:

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____